Ֆրանսիական բանակի քահանաներ.

Յայտնի է, թէ որքան հոգևորականներ այժմ պատերազմում մասնակցում են իբրև զինուորական քահանաներ, իբրև կամաւոր —քահանաներ և որպիսի անձնազոհ ծառայութիւններ են մատուցանում ու անհրաժեշտ հոգևոր մխիթարութիւն հասցնում հայրենիքի ազատութեանը իրենց անձը զոհ բերող զինուորներին։

Վ. Նեմիրովիչ-Դանչենկոն Русс. Слов.-ի № 158-ում Съ Французскаго фронта—յօդուածում նկարագրում է Ֆրանսիական բանակի քահանաներին։ Ըստ յօդուածգրի, Ֆրանսիական բանակի քահանաները յատուկ ուշադրութեան արժանի են. Ֆրանսիան կարծես հաշտւում է իր հոգևորականութեան հետ. «Մենք մինչև հիմայ իրար չէինք հասկանում, ասել են թղթակցին, այժմ, պատերազմի դաշտում, թշնամու սպանիչ կրակի տակ, պաշտպանութեան և յարձակման մէջ, մենք սովորել ենք մեր քահանաներին գնահատել։ Նրանք զինուորներից անբաժան են. նրանց կտեսնէք բոլոր խրամատներում, ստորերկրեայ անցքերում, ուր մեր զոնք սպասում են նշանի, որ յետ խլեն թշնամուց, ռազմի դինը» Քահանաներն էլ զինուորականների զգեստներ ունին և կրծքերի վրայ եղած խաչն է տարբերում միւսներից։

Երբ զինուորական նախարար Միլերանը թոյլատրեց, որ առաջաւոր դիրքերում լինեն թէ կաթոլիկներ, և թէ բողոքական քահանաներ և հրէայ ռաբբիներ. հարիւրաւորներ գրուեցին. թիւը հազարների հասաւ։ Եւ երկու տարուայ ընթացքում անգնահատելի ծառայութիւններ են մատուցել զօրքին։ Պատարագ են անում խրամատում։ «Եթէ կայ դէզ կամ կալ կամ երկու խրամատի մէջ տեղում կատարում են արարողութիւնը. խոտով լի սայլը պատերազմական սեղանն է, մօտը քնած կովերը, որքան հետաքրքիր է և հոգևոր այդ արարողութիւնը։ Աւելի աղդեցիկ է խրամատում կատարուող արարողութիւնը, ուր գնդակների վզզոցի, պայթող հրանօթների ոռնոցի ազմկում յաւիտենական ճշմարտութեանը ուղղուած երգերի ներդաշնակ ձայնն է հնչում։ Ցանկարծ փոքր նշանը աղօթողներին գերմանացոց դէմ է կանչում և «Աստուած մեզ հետ» ասելով վազում են թշնամու դէմ զինուորները։

Աղօթելու ժամանակ պատահել է դէպք, որ հրանօթն ընկել է ս. սեղանի վրայ և կտոր կտոր արել պաշտօն տանող քահանային, իսկոյն մի ուրիշն անցել է տեղը և շարունակել սուրբ խորհուրդը։

Գումարտակի անունով տրուած հրամաններում յաճախ յիշւում են քաջամարտիկ քահանաների անունները։ Օրինակ, երբ գերմանացիք գերի են տանում մի գումարտակի ֆրանսիացի

զինուորներին, գումարտակի քահանան էլ գերիների ետևից գնում է, չուզենալով իր զինուորներին առանց հոգևոր մխիթարության թողնել, մանաւանդ, որ վիրաւորներին օգնելու տեսակէտից գնահատելի ծառայութիւն են մատուցանում քահանաները։

Քահանան յարձակման ժամանակ զինուորի առաջից է գնում, նահանջի ժամանակ վերջից։ Քահանան կապում է թշնամու ձեռքով քանդուած տելէֆոնների թելերը, քահանան զինուորներին ժողովում է և գնում գերմանացոց հրդէհ ձգած տեղը հանգցնում, քահանան գնդակների տարափի տակ գնում է հարևան զօրամասից օգնութիւն խնդրում։

Հրէայ ռաբբին, գնդակով վիրաւոր չի ուզում, որ առաջ իրեն վերցնեն, յետոյ միւս վիրաւոր զինուորներին. թէև 5 երեխայ է ունենում.—Իմ երեխաներին Երկնքի Հայրը և Հայրենիքը կպահի—ասում է նա։ Արիւնահոս լինելով հանդերձ նա դեռ շարունակում է մխիթարել միւսներին։